

ԿԱՐԾԻՔ

Վարդուհի Արթուրի Ղուկասյանի

«Դիվանագիտական դիսկուրսի ոճական և գործաբանական բնութագիրը» թեմայով

Ժ. 02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գլոբալացման գործընթացների համատեքստում օրըստօրե աճում է դիվանագիտության դերն ու կշիռը միջազգային հիմնախնդիրների կարգավորման գործընթացում: Հակամարտություններով լի ներկայիս աշխարհում կայուն խաղաղության հաստատումն առաջնահերթություն է, որն ստիպում է նորովի արժևորել հակամարտությունների ժամանակ ուժի չկիրառման, դրանք բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու դերն ու նշանակությունը: Դրանում կարևոր դեր է վերապահված լեզվադիվանագիտությանը: Լեզվադիվանագիտությունը կամ դիվանագիտական լեզվաբանությունը՝ իբրև առանձին միջգիտակարգ, առաջացել է երկու ինքնուրույն գիտությունների՝ լեզվաբանության և դիվանագիտության խնդիրների հատման և մեկտեղման արդյունքում և անքակտելիորեն կապված է այլ ժամանակակից լեզվաբանական գիտակարգերի հետ, հատկապես՝ հաղորդակցական և ճանաչողական լեզվաբանության հետ: Լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, նաև ամփոփում է ազգի նկարագիրը, աշխարհաճանաչողությունը, լեզվամտածողությունը, հոգեբանությունը, կենսափիլիսոփայությունը և այլն: Ըստ այդմ՝ զարմանալի չէ, որ լեզուն հանդիսացել է շատ տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա, այդ թվում նաև դիվանագիտության:

Լեզվադիվանագիտության ուսումնասիրության առարկան դիվանագիտական խոսույթն է, որը լեզվի ուսումնասիրության և դրա գործառնման բացարձակապես ուրույն տեսանկյուն է: Այս առումով ատենախոսության թեման հետաքրքրական և **արդիական**

է ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների համատեքստում, քանի որ նվիրված է ժամանակակից լեզվաբանության հարաճուն հետաքրքրություն ներկայացնող համեմատաբար նոր ճյուղի՝ այն է՝ թվային դիվանագիտությանը, ինչպես նաև դիվանագիտական փաստաթղթերի, լեզվաոճական, եզրաբանական առանձնահատկություններին: Ատենախոսի մանրազնին քննությունից ակնհայտ է, որ ներկայիս գրեթե բոլոր ոլորտների թվայնացման և առաջադեմ տեխնոլոգիաների զարգացման համատեքստում նման ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է: Դիվանագիտական խոսույթի լեզվաբանական ուսումնասիրության հանդեպ հետաքրքրությունը գնալով մեծանում է, քանի որ այդ ոլորտի լեզվական առանձնահատկությունները կարևոր են արդյունավետ միջազգային համագործակցության զարգացման համար: Դիվանագիտության՝ որպես համընդհանուր սկզբունքի կարևորությունը սոցիալական փոխազդեցություններում, դրա բացահայտումը և վերլուծությունը պաշտոնական համատեքստում, դիվանագիտական խոսույթի լեզվաոճական առանձնահատկությունների ուսումնասիրություններն **արդիական են** և հնարավորություն են տալիս նորովի մեկնելու և վերլուծելու դիվանագիտական ենթաոճի դրսևորումները խոսքում: Դիվանագիտական խոսույթի լեզվաոճական առանձնահատկությունների բացահայտումը զարգացող ուղղություն է ժամանակակից լեզվաբանության մեջ: Ներկայումս դիվանագիտական խոսույթի ուսումնասիրությունը դարձել է արդիական և առանձին դեպքերում նույնիսկ խիստ անհրաժեշտ՝ հաշվի առնելով դիվանագիտական խոսույթի՝ դիվանագիտական գործընթացների և հասարակության գիտակցության վրա ունեցած զգալի ազդեցությունը:

Հատկանշական է, որ գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը վերաբերում է դիվանագիտական խոսույթի բանավոր և գրավոր ձևակերպումներին, իր հանրամշակութային, գործաբանական և այլ գործոնների ամբողջության մեջ: Վ. Ղուկասյանի աշխատանքում դիվանագիտական խոսույթը ներկայացվում է որպես հանրության անդամների ինտերակտիվ գործունեություն, որն ապահովում է նրանց համագործակցությունը՝ ունենալով զգայական, տեղեկատվական ազդեցություն նրանց

վրա: Ցանկացած տեսակի խոսույթ ամփոփում է տվյալ ժամանակահատվածի ոլորտային գաղափարական հենքը, լեզվամտածողությունը, աշխարհի լեզվական պատկերը, հաղորդակցական ռազմավարությունները և այլն: Ատենախոսի կատարած հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել լեզվաոճական հնարների դերը, դիվանագիտական տեքստերի կառուցվածքային և եզրաբանական առանձնահատկությունները, թվային դիվանագիտությունը՝ որպես հաղորդակցության նոր միջոցի ռազմավարություն: Նշված նպատակին հասնելու և դիվանագիտական խոսույթի լեզվաոճական առանձնահատկություններով պայմանավորված դիվանագիտական ռազմավարությունների իրագործման հենքը վեր հանելու համար ատենախոսը դիմել է զանազան մեթոդների կիրառմանը (համատեքստային-մեկնական, ինտենտ վերլուծության, կոնտենտ վերլուծության, լեզվաբանական նկարագրության, դասակարգման, քանակական և որակական բովանդակության վերլուծության մեթոդները) և քննության առել դիվանագիտական գրագրության տարբեր տեսակներ, մասնավորապես *հավաքարմագրեր, նոտաներ, կոմյունիկեներ, հուշագրեր, հուշաթերթիկներ, դեմարշներ, միջազգային պայմանագրեր, նամակներ* և այլն: Հատկանշական է, որ ժամանակակից դիվանագիտական խոսույթում մեծ է լեզվաոճական միջոցների դերը, քանի որ դրանք հուզականություն են հաղորդում խոսքին՝ հաճախ միտումնավոր շեղելով փոխանցվող հաղոդման բուն ուղերձից: Աշխատանքի առավելություններից հատկանշական է դիվանագիտական խոսույթի համակողմանի ուսումնասիրությունը մի քանի հարթությամբ, մասնավորապես՝ հանրալեզվաբանական, գործաբանական և ոճագիտական մոտեցումների լոյսի ներքո, որոնք առավել հիմնավորված և արժանահավատ են դարձնում հետազոտության լեզվական կողմին վերաբերող հիմնադրույթները:

Աշխատանքի **նորույթն** այն է, որ փորձ է արվում ուսումնասիրել դիվանագիտական գրագրության, հատկապես թվային դիվանագիտության լեզվաոճական և գործաբանական առանձնահատկությունները փաստական ընդգրկուն լեզվանյութի հիման վրա:

Ներկայացվող ատենախոսության լեզվական նյութ են ընտրվել ներքին և արտաքին դիվանագիտական գրագրությունը: Վերլուծվել են դիվանագիտական փաստաթղթեր, դիվանագիտական գերատեսչությունների պաշտոնական կայքեր, սոցիալական ցանցերում, դիվանագետների ինստիտուցիոնալ և անձնական էջերում հրապարակված տեքստեր, վերլուծության են ենթարկվել ավելի քան 600 եզրույթ: Արդյունքում ատենախոսը կատարել է հարուստ ու բազմազան նյութի քննություն լեզվաբանական մոտեցմամբ, որը թույլ է տալիս վեր հանել լեզվական նյութի տվյալ տեսակին բնորոշ լեզվական որոշակի ձևեր և առանձին փաստեր, որոնք արտացոլված են դիվանագիտական փաստաթղթերում: Աշխատանքի **մեթոդաբանական հիմքը** դիվանագիտական խոսույթի, թվային դիվանագիտության մասին տեսությունների ուսումնասիրություններն ու մեթոդներն են, մասնավորապես այնպիսի լեզվաբանների տեսությունները, ինչպիսիք են՝ Ն. Արուսյունովան, Տ. Ա. վան Դեյքը, Գ. Ն. Լիչը, Դ. Էդվարդզը, Հ. Վիդոուսոնը, Ռ. Սքոլոնը, Ռ. Վոդակը, Ն. Ֆարլոուն, Վ. Պոպովը, Է. Սատոուն, Խ. Տրաբելսին, Լ. Ֆարաֆոնովան, Գ. Բերիջը և ուրիշներ:

Հատկանշական է, որ ատենախոսությունը **տեսակիրառական արժեք** ունեցող ամբողջական աշխատանք է: Վերջինս կարող է նպաստել լեզվադիվանագիտության, թվային դիվանագիտության դասավանդման արդյունավետությանը: Անկասկած, այս ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներին, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին, դիվանագիտական առաքելությունների մամլո կցորդներին:

Ատենախոսությունն ունի կուռ և տրամաբանական կառուցվածք. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, յուրաքանչյուր գլխից հետո տրված համապատասխան ծանոթագրություններից, որոնք տեղին են և ճանաչողական, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են հետազոտության արդիականությունն ու գիտական նորույթը, հստակեցվում են նպատակն ու խնդիրները, նշվում

մեթոդաբանական հենքն ու կիրառված մեթոդները, ինչպես նաև ներկայացվում է աշխատանքի տեսակիրառական նշանակությունն ու կառուցվածքը:

Առաջին գլխում («Դիվանագիտական դիսկուրսի հեղափոխությունները լեզվաբանության ժամանակակից հարացույցում») դիտարկվում են «դիվանագիտական դիսկուրս», «թվային դիվանագիտություն» հասկացությունների վերաբերյալ տարբեր լեզվաբանների տեսակետները և տեսական դրույթները, մանրակրկիտ քննության են առնվում դրանց կառուցվածքային հատկանիշները: Ուսումնասիրման դիտակետում են մի շարք գործառույթներ (**հաղորդակցական, քարոզչական, դրդիչ, մրաշահարկային, հուզազգայական, մեղալեզվական, խոսքարկման և գեղագիտական**), որոնք ապահովում են դիվանագիտական խոսույթի նպատակադրման առկայացումը: Բացի այդ, այս գլխում կատարվախ է բավականին հետաքրքիր համալիր վերլուծություն թվային դիվանագիտության խոսույթի՝ որպես հաղորդակցության նոր միջոցի վերաբերյալ: Վերլուծվում են ԱԳՆ-ների կայքեր, գերատեսչական հարթակներ, բլոգեր, սոցիալական ցանցեր (մասնավորապես *Facebook, X (Twitter) և Instagram*), մեդիա ռեսուրսները, որոնք ունեն մի շարք հատկանշական լեզվական առանձնահատկություններ:

Երկրորդ գլխում (Դիվանագիտական դիսկուրսի լեզուն և ոճը) ուսումնասիրության է ենթարկվում դիվանագիտական փաստաթղթերի լեզվական, քերականական և ոճական առանձնահատկությունները, վեր են հանվում համապատասխան առանձնահատկությունները: Քննության են առնվում նաև դիվանագիտական եզրույթները իմաստային, խոսքիմասային և բառակազմական տեսանկյուններից: Դիվանագիտական հաղորդակցության ոլորտի եզրույթաբանությունը ներկայացված է տարբեր մասնագիտական ոլորտների եզրույթներով: Դիվանագիտությունը պահանջում է առավելագույն ճշգրտություն, որն ապահովվում է դիվանագիտական լեզվում առկա եզրույթների միջոցով:

Երրորդ գլխում («Հուզարտահայտչականության առանձնահատկությունները դիվանագիտական դիսկուրսում») դիտարկվում են հուզարտահայտչականության լեզվաոճական միջոցները (*փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն,*

մեղմասություն, մակդիր, ակնարկ, դարձվածք, կրկնություն և շարահյուսական զուգահեռություն), դիվանագիտական հաղորդակցման մեջ: Հստակեզվում են դիվանագետի խոսքի առանձնահատկությունները, խոսքային կաղապարները և հուզահաղորդակցական տարրերը: Դիվանագիտական խոսույթում հուզարտահայտչականության ուսումնասիրությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ դիվանագիտական տեքստերում և հարցազրույցներում հույզերի արտաքին արարողակարգային արգելքի պայմաններում, այնուամենայնիվ, առկա է որոշակի իրադարձության հույզերի և գնահատականների արտահայտություն: Վերջինս այս գլխի ուսումնասիրության առավել նշանակալի մասն է, քանզի տեքստի իմաստային և ոճական վերլուծության մեթոդներով ատենախոսը բացահայտում է դիվանագիտական խոսույթին բնորոշ լեզվական կառույցները, որոնք արտահայտում են հույզեր և պարունակում են գնահատողական արժեք:

Ընդհանուր առմամբ, բարձր գնահատելով ատենախոսի կատարած մեծածավալ ուսումնասիրությունը, կցանկանայի խոսել մի քանի նկատառումների մասին.

1. Աշխատանքում առկա են օտար և օտարահունչ բառեր, որոնց համարժեքները լայն շրջանառություն ունեն արդի գիտության մեջ, մասնավորապես՝ *դիսկուրս*, *բազմադիսկուրսային*, *տերմին*, *տերմինաբանություն*, *պրոֆիլ*, *դիսֆեմիզմ* և այլն: Կարելի էր առաջարկել դրանց հայերեն թարգմանության տարբերակ, օրինակ՝ *դիսֆեմիզմ* բառի դեպքում:

2. Առաջին գլխի 1.2 ենթագլուխը՝ վերնագրված «Թվային դիվանագիտության լեզվական առանձնահատկությունները», ավելի շատ պարունակում է գործաբանական քննություն, քան լեզվական, բացի այդ համակարգված չէ ըստ լեզվական առանձնահատկությունների, մասնավորապես՝ բառային, քերականական, շարահյուսական, հնչյունային և այլն:

3. Առկա են որոշ հաստատումներ, որոնք ճշգրտման կարիք ունեն, մասնավորապես՝ 60-րդ էջում նշված է, որ դիվանագիտական հաղորդակցությունը, ի

թիվս այլոց, «սահմանվում է որպես արտահայտչական հաղորդակցություն (անհրաժեշտ է գործողության դրդում)», սակայն դա նույն ներգործական հաղորդակցությունն է՝ ըստ էության:

4. 111-րդ էջում նշված է, որ «փոխաբերությունը օգտագործվում է դիվանագիտական խոսքում որպես ունկնդիրների ուշադրությունը գրավելու միջոց...»: Սակայն ցանկացած ոճական հնար միտված է այդ գործառույթը կատարելու: Անհասկանալի է նույն դիտարկման շարունակությունը, որը պնդում է, որ «փոխանունությունը ներգործության ձևերից է, որը հանգեցնում է հասցեատիրոջ գիտակցության մեջ գոյություն ունեցող աշխարհի պատկերի վերափոխմանը»: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս և ինչու՞ միայն այս ոճական հնարը: Նույն պնդման շարունակությունն ասում է, որ «օգտագործվում են այնպիսի մակդիրներ, որոնց իմաստում արդեն իսկ կա գնահատողական երանգ»: Սակայն հայտնի է, որ մակդիրը առանց գնահատողական արժեքի ուղղակի ածական է:

5. 123-րդ էջում նշվում է, որ *emerging* բառը *empowerment* բառի մեղմասությունն է: Սակայն, համատեքստից ելնելով, այդ իմաստը առկա չէ, բացի այդ փոխարինող բառը գոյական է, մինչդեռ փոխարինվողը ածական:

6. Աշխատանքի թեմատիկան ենթադրում է դիվանագիտական խոսույթի գործաբանական վերլուծություն, սակայն դրանում չկա ակնարկ գործաբանական այնպիսի ներակա իմաստային երևույթների մասին, ինչպիսիք են կանխենթադրույթը և ներակայումը: Առկա են դրա մասնավոր դեպքերի դրսևորումներ, օրինակ՝ մեղմասությունը: Աշխատանքը կշահեր և կլիներ ավելի ամբողջական, եթե այս գործաբանական երևույթները համակողմանիորեն քննվեին դիվանագիտական խոսույթի առկայացման տեսանկյունից:

7. Աշխատանքը գործաբանական տեսանկյունից կշահեր, եթե այն պարունակեր քննություն ներազդողական ուժի և անուղղակի խոսքային ակտերի վերաբերյալ: Ամբողջ քննությունը մասնակի կամ անուղղակի խոսում է հաղորդակցման

առանցքային երևույթի՝ ասույթի ներազդողական ուժի վերաբերյալ, սակայն դրա ամնիջական քննություն չկա, որը առանցքային է այս հետազոտության համար: Խոսքային ակտերի մասին քննությունը առավել լիարժեք և բազմաշերտ կդարձնեք ներազդողական գործառույթի առկայացումը դիվանագիտական խոսույթում:

Նշված դիտարկումները կրում են մասնակի բնույթ, չեն ազդում կատարած հետազոտության գիտական արժեքի վրա և կարող են ուղղվել հետագա ուսումնասիրություններում:

Հեղինակի կողմից կատարված մեծածավալ հետազոտությունը շարադրված է գրագետ, գիտական լեզվով: Այն հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք: Ատենախոսության հիմնադրույթների գերակշիռ մասը պարունակում է որոշակի գիտական նորույթ և հիմնավորված նոր մոտեցումներ: Կարելի է նշել, որ Վարդուհի Ղուկասյանը լիովին կատարել է իր առջև դրված խնդիրները՝ հիմնավոր կերպով ներկայացնելով թեմային առնչվող տեսական և գործնական նյութը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են 7 գիտական հոդվածներում, իսկ աշխատանքում կիրառվող մոտեցումները քննարկվել են ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի նիստերում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ներառում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են մատչելի լեզվով, դրանց ձևավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Վարդուհի Արթուրի Ղուկասյանի «**Դիվանագիտական դիսկուրսի ոճական և գործաբանական բնութագիրը**» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական

ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հեղինակն արժանի է ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Խորացված անգլերենի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ք.գ.դ., պրոֆեսոր

Հրանուշ Ժորայի Թովմայան

Հ. Թովմայանի ստորագրությունը հաստատում եմ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի

գիտական քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Ծաղիկ Ստեփանի Հովհաննիսյան

05.02.2025թ.